ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ

ԻՄ ՔԱՅԼԸ ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄ

ՏԻԿԻՆ ԳԱՅԱՆԵ ՄԵԼՔՈՄ ՄԵԼՔՈՄՅԱՆԻՆ

Հարգելի տիկին Մելքոմ Մելքոմյան

Ի պատասխան Ձեր 13.07.2020թ. հ.20/69188 գրության՝ հայտնում եմ.

Համաձայն Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի իրավաբանական վարչության կողմից ներկայացված տեղեկատվության՝ <<Մթնոլորտային օդի պահպանության մասին>> օրենքի 21-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված են պարտավորություններ, որոնք կանխարգելում են մթնոլորտային օդի աղտոտումը վնասակար արտանետումներից, որը չի սահմանափակվում միայն նշված պարտավորությունների կատարմամբ, այլ պահանջում է հատուկ մասնագիտական գիտելիքների վրա հիմնված համակարգված միջոցառումների իրականացում, հետևաբար, մեր կարծիքով ավելի նպատակահարմար և արդյունավետ է այդ պարտավորությունների կատարման նկատմամբ վերահսկողության իրականացումը նման ուղղվածություն ունեցող մարմնի կողմից: Բացի այդ, մեր կարծիքով Երևանի քաղաքապետարանի աշխատակազմը ներկայումս չունի բավարար ռեսուրս մթնոլորտային օդի աղտոտմանն ուղղված վերահսկողական աշխատանքներ իրականացնելու համար:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ